



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Նոյեմբերի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի երրորդ րասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայից բարձր 1-3, Լոռիում, Տավուշում, Սյունիքում՝ բարձր 3-5 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները Տավուշում գրանցվել է +18...+20°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +23...+25°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+18°C, Շիրակում՝ +6...+10°C (Գյումրի՝ +13°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +6...+9°C, նախալեռնային շրջաններում՝ +11...+13°C, Գեղարքունիքում՝ +6...+12°C, Լոռիում՝ +13...+18°C, Արմավիրում՝ +17...+19°C, Արարատում՝ +18...+20°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +7...+9°C, նախալեռներում՝ +10...+14°C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են 29-ին. Տավուշում գրանցվել է -2...-6°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -8...-10°C, նախալեռնային շրջաններում՝ -1...-3°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ -2...+2°C, նախալեռնային շրջաններում՝ -4...-9°C, Շիրակում՝ -7...-12°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -5...-10°C, նախալեռնային շրջաններում՝ -4...-6°C, Գեղարքունիքում՝ -4...-9°C (Գավառ՝ -11°C), Լոռիում՝ -6...-11°C, Արմավիրում՝ -4...-6°C, Արարատում՝ -2...-5°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -8...-10°C, նախալեռներում՝ -2...-4°C:












Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 6-15մմ (65-144%) Լոռիում՝ 1-7մմ (16-63%), Տավուշում՝ 4-13մմ (42-119%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 7-14մմ (45-132%), նախալեռներում՝ 3-6մմ (40-66%), Գեղարքունիքում՝ 1-21մմ (13-221%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 12-18մմ (75-100%), նախալեռներում՝ 10մմ (96%), Արմավիրում՝ 3-4մմ (32-60%), Արարատում՝ 5-20մմ (63-215%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 21մմ (115%), նախալեռներում՝ 16մմ (229%), Սյունիքի նախալեռներում՝ 1-4մմ (7-62%), հովիտներում տեղումներ չեն դիտվել:

Նոյեմբերի երրորդ տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են 29-ին, 30-ին. լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում՝ -10...-14°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում և Սյունիքի հովտային շրջաններում՝ -4...-8°C:



Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ





Գյուղատնտեսական մշակարույսեր

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենի վեգետացիան դադարել է: Առանձին լեռնային շրջաններում (Գյումրի, Սիսիան, Մասրիկ, Ֆանտան) աշնանացանը գտնվում է ձմեռման թփակալած, մնացած լեռնային շրջաններում՝ երրորդ տերևի և հանգուցային արմատների առաջացման փուլերում:

Հովտային շրջաններում բույսի աճ տեղի է ունենցել միայն ցերեկային ժամերին, առանձին հովտային շրջաններում (Արարատ, Ուրցաձոր) աշնանացանը թփակալել է:

Մերձավանում աշնանացանի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարները 0-10սմ-ում կազմել են 11մմ, 0-20սմ շերտում՝ 26մմ, 0-30սմ՝ 49մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել էր 4-10մմ-ով:

Աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 14-26սմ: